



California's protection & advocacy system

Ի՞նչ պետք է իմանան Տնային օժանդակող ծառայությունների շահառուները չազդարարված տնային այցերի մասին

Հոկտեմբեր 2018թ., Հրատ. #5494.10 - Armenian

Տնային այցերը մշտապես կազմել են IHSS ծառայությունների իրավունակության գնահատման կամ վերագնահատման գործընթացի մի մասը: Այս տնային այցերը կատարում են IHSS սոցիալական աշխատողները: 2009թ. Կալիֆորնիայի օրենսդրությունը փոփոխվեց, որով Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության վարչությունից (անգլ.՝ California Department of Social Services, CDSS) պահանջվում էր կազմել շահագրգիռ կողմերի խումբ, որը մշակելու է արձանագրություններ նահանգի և վարչաշրջանի դերերն ու պատասխանատվությունները սահմանելու համար, որոնց համաձայն պետք է իրականացվեն IHSS ծրագրի ամբողջականության պահպանմանը և խարդախությունների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Շահագրգիռ կողմերի խումբը մշակեց Միասնական նահանգային արձանագրություններ (այսուհետ՝ Արձանագրություններ) IHSS Ծրագրի ամբողջականության պահպանմանն ուղղված գործողությունների համար: Արձանագրություններում ներկայացվող միջոցառումներից մեկը ծրագրի ամբողջականությունն ապահովող չազդարարված տնային այցերն են: Այս հրապարակման մեջ քննարկվում են չազդարարված տնային այցերը:

Չազդարարված տնային այցերը տարբերվում են վարչաշրջանների չալանավորված այցերից չազդարարված տնային այցերին չառնչվող

այնպիսի պատճառներով, ինչպիսիք են կարիքների գնահատումը, վերագնահատումը կամ անվատնագության ու բարեկեցության ստուգումները:¹ Այդ նպատակով կատարվող չալանավորված այցերը պարտադիր չէ, որ համապատասխանեն սույն հրապարակման մեջ ամփոփված ծրագրի ամբողջականության պահպանման ուղղված չազդարարված տնային այցերի կանոններին:² Ձեր վարչաշրջանից ճշտեք իրենց կողմից չալանավորված այցերի կատարման ընթացակարգերի մասին:

Չազդարարված տնային այցերը տարբերվում են նաև այն տնային այցերից, որոնք վարչաշրջանը կատարում է որպես որակի ապահովման իր ծրագրի մաս: «Որակի ապահովման նպատակով տնային այցերը» կատարում է վարչաշրջանի որակի ապահովման անձնակազմը, այլ ոչ գործը վարող աշխատակիցը կամ նրա վերահսկիչը:³ Որակի ապահովման և չազդարարված տնային այցերի տարբերությունների մասին մանրամասն տեղեկատվության համար տե՛ս All County Letter No. 10-39-ը:

1. Կարո՞ղ են վարչաշրջանի բարեկեցության բաժնի աշխատակիցները գալ իմ տուն առանց նախազգուշացման:

¹ All County Letter 13-83, Էջ 3. - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

² *Id.* - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

³ Տե՛ս Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության վարչության Տարեցների կարիքներին ուղղված ծրագրերի բաժնի Տնային օժանդակող ծառայություններ (անգլ.՝ In-Home Support Services, IHSS) ծրագրի որակի ապահովման/որակի բարձրացման (QA/QI) քաղաքականության ձեռնարկը, 6 (2013), MPP բաժին 30-702-ն ավելացվել է՝ Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության մասին օրենքի բաժին 12305.71-ն իրագործելու համար. – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Այո:⁴

2. Ե՞րբ կարող են վարչաշրջանի բարեկեցության բաժնի աշխատակիցները գալ իմ տուն:

Ծրագրի ամբողջականության ապահովման ուղղված Չագդարարված տնային այցերի անձնակազմը չի կարող կատարել պատահական այցեր:⁵ Այլ կերպ ասած՝ պետք է առկա լինի որոշակի «մտահգության արտահայտում ծրագրի ամբողջականության խախտման վերաբերյալ»,⁶ օրինակ՝ խարդախության կասկածանք: CDSS-ն կկազմի այն շահառուների ցանկը, ովքեր համապատասխանում են չագդարարված տնային այցերի պայմաններին և այդ ցուցակները կտարածի ծրագրի ամբողջականության ապահովման վարչաշրջանային պատասխանատուներին:⁷ Շահառուների ցուցակները կազմվում են «շահառուի կամ նրան տրամադրվող ծառայությունների որակի, շահառուի ծառայությունների, շահառուի բարեկեցության վերաբերյալ որոշակի մտահգության կամ ծրագրի ամբողջականությանն առնչվող այլ մտահգությունների» հիման վրա:⁸ Նույն պատճառներով վարչաշրջանները կարող են չագդարարված տնային այցերի ցուցակներում ավելացնել նաև անուններ:⁹ Վարչաշրջան

⁴ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. օրենքի § 12305.71(c)(3)(B). Նշում. վարչաշրջաններն այնուամենայնիվ կարող են իրականացնել չպլանավորված տնային այցեր՝ կարիքների գնահատում, վերազնահատում, անվտանգության և բարեկեցության ապահովվածության ստուգումներ իրականացնելու և այլ նպատակներով, որոնք չեն համարվում չագդարարված տնային այցեր. – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁵ ACL 13-83, p.4 - [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁶ [Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության Վարչության Տարեցների կարիքներին ուղղված ծրագրերի բաժին, Տնային օժանդակող ծառայությունների \(IHSS\) Միացյալ նահանգային արձանագրություններ, ii \(2013\):](#) - [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁷ ACL 13-38, p. 4. – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁸ *Id.* – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁹ *Id.* – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

իրականացնելու Է չազդարարված տնային այցեր այդ ցուցակներում ընդգրկված շահառուների համար:¹⁰

3. Ի՞նչ Է նշանակում IHSS-ի խարդախություն:

Նահանգային օրենսդրությունը IHSS ծրագրի առնչությամբ «խարդախությունը» սահմանում Է որպես «որևէ անձի կողմից միտումնավոր կատարված խաբեբայություն կամ տվյալների աղավաղում՝ իմանալով, որ այդ խաբեբայության արդյունքում ինքը կամ որևէ մեկ այլ անձ կարող Է ստանալ որոշակի չթույլատրված օգուտ»:¹¹ Ուշադրություն. այս սահմանումը չի ներառում ոչ միտումնավոր գործողությունները կամ սխալները:

4. Ո՞րն Է չազդարարված տնային այցերի նպատակը:

Չազդարարված տնային այցերի նպատակն Է՝ համոզվել, որ ձեզ համար թույլատրված ծառայությունները բավարարում են ձեր կարիքներն այն մակարդակով, որը թույլ Է տալիս ձեզ ապահով կերպով մնալ ձեր տանը:¹² Դրանք իրականացվում են նաև ձեր գործում պահվող տեղեկատվությունն ստուգելու նպատակով:¹³ Վերջապես, դրանք հնարավորություն են տալիս չազդարարված տնային այցեր կատարող անձնակազմին հիշեցնելու ձեզ IHSS ծրագրի կանոնների, պահանջների և դրանց չիտունելու հետևանքների մասին:¹⁴ Որպես հետևանք կարող Է լինել ձեր IHSS-ի կորուստը:¹⁵

¹⁰ *Id.* – [\(Վերադարձնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹¹ *ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*. Օրենքի § 12305.8(a), ACL 13-83, Էջ 11. Խարդախությունները ներառում են նաև այնպիսի գործողություններ, որոնք սահմանվում են որպես խարդախություն նահանգային և դաշնային օրենքներով. – [\(Վերադարձնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹² ACL 13-83, p. 3. – [\(Վերադարձնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹³ IHSS-ի Միացյալ նահանգային արձանագրություններ, վերևում նշում 6, Էջ 6-ում. – [\(Վերադարձնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹⁴ *Id.* – [\(Վերադարձնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹⁵ *Id.* – [\(Վերադարձնալ հիմնական փաստաթղթին\)](#)

5. Ո՞վ է կատարում այդ չազդարարված տնային այցերը:

Չազդարարված տնային այցերը կատարում է վարչաշրջանի վերապատրաստված IHSS-ի անձնակազմը:¹⁶ Քանի որ վարչաշրջաններից պահանջվում է ունենալ հատուկ վերապատրաստված անձնակազմ չազդարարված տնային այցեր կատարելու համար, հնարավոր է, որ չազդարարված տնային այցերի անձնակազմը լինի նաև ձեր վարչաշրջանի IHSS սոցիալական աշխատողը:¹⁷ Վարչաշրջանը կարող է պահանջել, որ հարկադիր կատարման մարմնի աշխատակիցն ուղեկցի չազդարարված տնային այցերի անձնակազմին:¹⁸

6. Ես ունե՞մ իրավունքներ, երբ վարչաշրջանի բարեկեցության բաժնի աշխատակիցները գան իմ տուն:

Այո: Վարչաշրջանի բարեկեցության բաժնի աշխատակիցները պետք է ներկայանան, ցույց տան անձը հաստատող լուսանկար և կրեն բեյջ:¹⁹ Դուք կարող եք պահանջել ներկայանալ և կարող եք խնդրել, որ ձեզ տրամադրեն հեռախոսահամար, որպեսզի զանգահարեք վարչաշրջան և ստուգեք չազդարարված տնային այցերի անձնակազմի ինքնությունը: Վարչաշրջանը չի կարող անում հաստատել անձնակազմի ինքնությունը, կամ չազդարարված տնային այցերի անձնակազմը չունի ինքնությունը հաստատող փաստաթուղթ, դուք կարող եք թույլ չտալ ներս մտնել, և դա չի համարվի ձեզ հասանելիք երեք փորձերից մեկը՝ նախքան հետագա քայլեր ձեռնարկելը:²⁰

¹⁶ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՅՆՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. Օրենքի §§ 12305.71(a), (c)(3)(B)., IHSS-ի Միացյալ Նահանգային արձանագրություններ, վերևում նշում 6, էջ 5-ում, ACL 13-83, էջ 4. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁷ ACL 13-83, p 4. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁸ IHSS-ի Միացյալ Նահանգային արձանագրություններ, վերևում նշում 6, էջ 10-ում. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁹ Id. էջ 7-ում. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁰ Id. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

Եթե դուք չազդարարված տնային այցերի անձնակազմին թույլ տաք մտնել ձեր տուն, ապա չազդարարված տնային այցերի անձնակազմը պետք է հայտնի ձեզ իր այցի նպատակը: Չազդարարված տնային այցերի անձնակազմը կարող է տալ հարցեր ծառայությունների և ծառայությունների որակի մասին:²¹ Նրանք կտեղեկացնեն նաև ծրագրի կանոնների և դրանց չհետևելու հետևանքների մասին:²² Նրանք կարող են դիտել ձեր տան «ընդհանուր տարածքը», ինչը նշանակում է, որ նրանք չեն կարող տեսնել օրինակ զուգարանները կամ փակ դարակները:²³

Չազդարարված տնային այցերի անձնակազմը պետք է գործի պրոֆեսիոնալ կերպով:²⁴ Չազդարարված տնային այցը, հեռախոսազանգերը և նամակները պետք է լինեն շահառուի փաստաթղթերում նշված մայրենի լեզվով:²⁵ Հակառակ դեպքում դուք կարող եք պահանջել անվճար թարգմանիչ:²⁶

Ձեզ պետք է վերաբերվեն սիրալիր և հարգանքով, ինչպես նաև հարգեն ձեր և ներգրավված բոլոր անձանց իրավունքները: Չանգվածային կամ ոչ կանոնավոր տնային այցերն արգելվում են: Ձեզ հետ կամ հավանական վկաների հետ հարցազրույցները պետք է անցկացվեն առանց սպառնալիքի, բռնության, ուժի գործադրման, անձը հաստատող կեղծ փաստաթղթի ցուցադրման կամ առանց այլ խեղաթյուրումների:

Վարչաշրջանը բոլոր ուսումնասիրությունները պետք է անցկացնի օրենքով սահմանված կարգով: Վարչաշրջանը չի կարող խախտել ձեր կամ ցանկացած այլ անձի սահմանադրական իրավունքները: Ձեր տան խուզարկումը կամ խարդախության ապացույց հանդիսացող ֆիզիկական իրերի հեռացումը չի թույլատրվում առանց խուզարկության վավեր հրամանագրի առկայության կամ ձեր թույլտվության այն բանից

²¹ Id. Էջ 8-ում. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

²² Id. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

²³ Id. Վարչաշրջանին անհրաժեշտ է խուզարկության օրդեր ձեր տունը խուզարկելու համար. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁴ Id. Էջ 6-ում. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁵ ACL 13-38, p. 5. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁶ Id. Էջ 7-ում. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

հետո, երբ դուք ամբողջությամբ իրազեկվել եք ձեր իրավունքների մասին:

7. Ի՞նչ է պատահում, եթե ես անկարող եմ, տեղում չեմ կամ չեմ ցանկանում մասնակցել չազդարարված տնային այցերի միջոցառումներին:

Չազդարարված տնային այցերի անձնակազմը կկատարի առնվազն ևս երկու այց, առնվազն երկու հեռախոսազանգ և կուղարկի նամակ հաջորդող 45-60 օրերի ընթացքում:²⁷ Նամակը, որը կարող են ուղարկել փոստով կամ թողնել այնպիսի ակնհայտ վայրում, որտեղ դուք ամենայն հավանականությամբ կտեսնեք այն,²⁸ պետք է բացատրի չազդարարված տնային այցերի և ծառայությունների կորստյան պատճառը, եթե դա ապացուցում է խարդախությունը:²⁹ Նամակում պետք է նաև նշված լինի, որ կատարվել են ձեզ հետ հեռախոսով կապվելու կամ ձեզ տանը գտնելու անհաջող փորձեր:³⁰ Չազդարարված տնային այցերի անձնակազմը կարող է նաև որոշել կապվել ձեզ հետ այլ ձևերով:³¹ Եթե այս ամենից հետո չազդարարված տնային այցերի անձնակազմը չի կարողանում կատարել չազդարարված տնային այցը, դուք ստանում եք ճանուցում ձեր IHSS-ի դադարեցման վերաբերյալ, քանի որ դուք չեք կատարել ծրագրի պահանջները:³² Դուք կարող եք բողոքարկել՝ պահանջելով նպաստի ժամանակավոր կասեցում:³³

²⁷ IHSS-ի Միացյալ Նահանգային արձանագրություններ, վերևում նշում 6, Էջ 8-ում. – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁸ ACL 13-83, Էջ 6. - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁹ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. Օրենքի § 12305.71 (c)(3)(C), IHSS-ի Միացյալ Նահանգային արձանագրություններ, վերևում նշում 6, Էջ 8-ում. - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

³⁰ IHSS-ի Միացյալ Նահանգային արձանագրություններ, վերևում նշում 6, Էջ 8-ում.- ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

³¹ *Id.* – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

³² *Id.* - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

³³ *Id.* Էջ 9-ում. – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

8. Ի՞նչ կարող է անել վարչաշրջանը, եթե վարչաշրջանն ունի կասկած խարդախության մասին:

Վարչաշրջանը պետք է իրականացնի խարդախության հետաքննության համար սահմանված որոշակի ընթացակարգ:³⁴ Առաջինը՝ վարչաշրջանը պետք է ներկայացնի հաշվետվություն, որն ուսումնասիրել է վարչաշրջանի կողմից հատուկ նշանակված անձնակազմը:³⁵ Վարչաշրջանի կողմից հատուկ նշանակված անձնակազմը դեպքի մասին հայտնում է Առողջապահության վարչությանը հետաքննությունը շարունակելու նպատակով, եթե խարդախության գումարը մեծ է \$500.00-ից, կամ տեղեկատվությունը վերադարձնում է սկզբնական վարչաշրջանային գործակալությանը՝ հնարավոր վարչական գործողություններ կատարելու նպատակով:³⁶ Հետաքննչական մարմինը (DHCS-ն կամ տեղական վարչաշրջանային գործակալությունը) կարող է այնուհետև փոխանցել ավարտված հետաքննությունը մեղադրանք առաջադրելու համար կամ փոխանցել այն սկզբնական վարչաշրջանային գործակալությանը՝ հնարավոր վարչական գործողություններ կատարելու նպատակով:³⁷ Խարդախությունների մասին տեղեկացման գործընթացի մանրամասները տե՛ս տվյալ վարչաշրջանի կայքէջում:³⁸

9. Որտե՞ղ կարող եմ ես բողոք ներկայացնել, եթե խախտվել են իմ իրավունքները:

Դուք կարող եք ներկայացնել բողոք վարչաշրջանին: Դուք կարող եք քաղաքացիական իրավունքների խախտման վերաբերյալ բողոք ներկայացնել նաև CDSS-ին:³⁹

³⁴ ACL 13-83, էջ 12. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

³⁵ IHSS-ի Միացյալ Նահանգային արձանագրություններ, վերևում նշում 6, էջ 20-21-ում. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

³⁶ *Id.* – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

³⁷ ACL 13-83, p. 13. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

³⁸ IHSS-ի Միացյալ Նահանգային արձանագրություններ, վերևում նշում 6, էջ 24-ում. – ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

³⁹ Տե՛ս [Բողոքի ներկայացում](#) - ([Վերադարձնալ հիմնական փաստաթղթին](#))

10. Ի՞նչ ռեսուրսների դիմեմ, եթե ես ունենամ այլ հարցեր:

Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը տրամադրում է իրավական խորհրդատվության անվճար ծառայություններ, օրինակ՝ հեռախոսային խորհրդատվություն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Չանգահարե՛ք 1-800-776-5746 հեռախոսահամարով: Ձեզ կարող է օգնել նաև ձեր IHSS ծառայությունների մատուցողների միությունը:

Մենք ցանկանում ենք լսել ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում! [\[Անցնել հարցումը\]](#) Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Հյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով: Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս այստեղ. <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>